ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 665-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 635-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2025 թվականի N –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 665-Ն ԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 635-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 53.1-րդ կետով.

«53.1. Կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի 100 տարին լրանալու օրվան հաջորդող ամսվա 1-ին ինքնաշխատ եղանակով նրան նշանակվում է 1,000,000 դրամի չափով միանվագ գումար (այսուհետ՝ միանվագ գումար) և նշանակման օրվանից նա ձեռք է բերում միանվագ գումար ստանալու իրավունք։ Միանվագ գումարը վճարվում է բացառապես անկանխիկ եղանակով՝ կենսաթոշակն վճարելու համար սահմանված կարգով։ Եթե միանվագ գումար ստանալու իրավունք ձեռք բերելու օրվա դրությամբ կենսաթոշակառուն կենսաթոշակը ստանում է կանխիկ եղանակով, ապա միանվագ գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու եղանակը փոխելու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարելու) համար դիմելու օրվան հաջորդող ամսվա վճարման ցուցակներով։»։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 26-ի «Ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու դեպքում նպաստը, ինչպես նաև ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացող անձի մահվան դեպքում թաղման նպաստը նշանակելու և վճարելու կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը հաստատելու մասին» N 635-Ն որոշման N 1 հավելվածը լրացնել

հետևյալ բովանդակությամբ նոր՝ 39-րդ կետով.

«39. Նպաստ ստանալու իրավունք ունեցող նպաստառուի 100 տարին լրանալու օրվան հաջորդող ամսվա 1-ին ինքնաշխատ եղանակով նրան նշանակվում է 1,000,000 դրամի չափով միանվագ գումար (այսուհետ՝ միանվագ գումար) և նշանակման օրվանից նա ձեռք է բերում միանվագ գումար ստանալու իրավունք։ Միաննվագ գումարը վճարվում է բացառապես անկանխիկ եղանակով՝ նպաստը անկանխիկ եղանակով վճարելու համար սահմանված կարգով։ Եթե միանվագ գումար ստանալու իրավունք ձեռք բերելու օրվա դրությամբ նպաստառուն նպաստը ստանում է կանխիկ եղանակով, ապա միանվագ գումարը վճարվում է նպաստ վճարելու եղանակը փոխելու (նպաստն անկանխիկ եղանակով վճարելու) համար դիմելու օրվան հաջորդող ամսվա վճարման ցուցակներով։»։

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 100 տարին լրացած, կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող նպաստառուին 1,000,000 դրամի չափով միանվագ գումարը վճարվում է կենսաթոշակի կամ նպաստի՝ առաջիկա վճարման ցուցակներով, եթե 100 տարին լրացած անձը կենսաթոշակը կամ նպաստը ստանում է անկանխիկ եղանակով։ Եթե սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա օրվա դրությամբ կենսաթոշակառուն կամ նպաստառուն կենսաթոշակը կամ նպաստը ստանում է կանխիկ եղանակով, ապա միանվագ գումարը վճարվում է կենսաթոշակ կամ նպաստ վճարման եղանակը փոխելու (կենսաթոշակը կամ նպաստն անկանխիկ եղանակով վճարելու) համար դիմելու օրվան հաջորդող ամսվա վճարման ցուցակներով։
4. Սույն որոշման դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ կենսաթոշակառուին կամ նպաստառուին, որպես Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Երևանի հասցեով հաշվառում ունեցող 100 տարին լրացած անձ, սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Երևանի քաղաքապետարանը նշանակել է 1,000,000 դրամ աջակցություն։
5. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Երևանի հաշվառում ունեցող 100 տարին լրացած և 1,000,000 դրամ աջակցություն ստացած անձանց տվյալների (անունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը և սերիան, հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը) տրամադրումը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում։
6. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝
    - սույն որոշման 5-րդ կետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ

ներկայացնել առաջարկություն՝ պետական բյուջեից միջոցներ հատկացնելու վերաբերյալ,
    - ապահովել 100 տարին լրանալու դեպքում կենսաթոշակառուին կամ նպաստառուին ինքնաշխատ եղանակով միանվագ գումար նշանակելն ապահովող ծրագրային գործիքի մշակումն ու ներդրումը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում:
7. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝ ապահովել կենսաթոշակը կամ նպաստն անկանխիկ եղանակով վճարման ծառայությունն ապահովելու համար անհրաժեշտ՝ բանկային հաշվի պայմանագրի ստորագրումը, բանկային քարտի տրամադրումը, տարեկան մեկ անգամ ՀՀ-ում լինելու մասին ստորագրված հայտարարության ստացումը կենսաթոշակառուի բնակության վայրում: